և իրապաշտություն: Բանախոսի համոզմամբ՝ այս երեք հատկանիշներով է պայմանավորված նաև Զոհրապի նովելների արժեքը:

Այդ նովելների բուն ժանրային արվեստի վերաբերյալ Թեքեյանի դիտարկումները որքան էլ հետաքրքիր, այնուամենայնիվ, մասնավոր կարգի են: Դրանց մեջ ամենից ավելի ուշագրավ է թերևս միայն մեկը: Խոսելով Զոհրապի երեք ժողովածուների և դրանց բնորոշ խորագրերի մասին՝ բանախոսը նկատում է. «Այդ տիտղոսներով զանոնք ուզած է դասավորել ետքեն, տեսակ մը դավանանք դնելով ատոր մեջ, զոր առաջ չուներ, երբ զանոնք գրի կառներ: Այն ատեն «Խղճմտանքի ձայներ» չէին անոնք իրեն համար և ոչ ալ «Լուռ ցավեր», այլ միմիայն ապրված կյանք, «կյանքը ինչպես որ է»: Իսկապես, այդ խորագրերով գրողն ինքը որոշակի համակարգի տակ էր դնում իր գեղարվեստական հետաքրքրությունները՝ դրանք դիտելով արդեն որպես պատմության իրողություններ:

Գ. Խաժակը Զոհրապի նովելներում նկատում է ոճի անկանոնություն, հաստատուն իդեալների բացակայություն: Բանախոսի կարծիքով՝ դա պայմանավորված է գրողի աշխարհայացքով: Արևմտահայ ութսունականների խումբը, ինչպես ներկայացնում է բանախոսը, իր հասարակական գաղափարաբանությամբ հետևում էր Գր. Արծրունու լիբերալիզմին: Իսկ լիբերալները իրենց ցույց տված ու քննադատած հասարակական հակասությունների լուծման արմատական միջոցներ չէին առաջադրում: «Ու այդ *հիմնական տեսակետի* պակասը կը դարձնեն զանոնք վարանոտ»: Եվ բանախոսը եզրակացնում է. «Հայկական *Լիպերալիզմը* – ինչպես և առհասարակ լիպերալիզմը – չունի ոչ մի արմատական միջոց իր իսկ ձաղկած հասարակական չարիքներուն դեմ: Ան կը մատնանշե չարիքը, բայց ճամփա չէ ցուցներ, վասնզի ինքը զուրկ է ղեկավար աստղե մը, ուղեցույց նպատակակետե մը: Զոհրապը այդ խումբեն է և խումբին լավագույնն է»: Զոհրապի հասարակական ու գրական աշխարհայացքի մասին այդպիսի տեսակետը գրականության պատմությունը վաղուց արդեն վերջնականապես վերանայել է: Հայ «նորավեպի իշխանի» և, առհասարակ, 80-ականների ամբողջ սերնդի «լիբերալիզմի» մասին դատողությունները այսօր միայն պատմական հետաքրքրություն կարող են ներկայացնել:

Զոհրապի «վրիպումների» մասին են խոսում Շավարշ Միսաքյանը և Զապել Ասատուրը: Անվանի բանաստեղծուհին